



□□□-□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□□□

Շենգավիթ բնակատեղիում հնագիտական ուսումնասիրությունները շարունակելու և ընդլայնելու անհրաժեշտությունից ելնելով արգելոց-թանգարանը 2009 թվականից գիտական և տեխնիկական համագործակցություն է իրականացնում ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և ԱՄՆ Պենսիլվանիայի Վաշինգտոնի համալսարանի մարդաբանության բաժանմունքի հետ: Այս համագործակցության շրջանակում ընթացող հնագիտական ուսումնասիրությունները և պեղումները ընթանում են պատմ. գիտ. դոկտոր, հնագետ Հակոբ Սիմոնյանի և Վաշինգտոնի համալսարանի պրոֆ. Միթչել Ռոթմանի կողմից:

Համագործակցության նպատակը կողմերի միջև պարբերաբար գիտական և տեխնիկական տվյալների փոխանակությունն է՝ հնավայրի լավագույնս գիտական ճանաչման, հայտնաբերված և դեռևս հայտնաբերման ենթակա մնացորդների անվտանգ պահպանության, ինչպես նաև գիտական տվյալների հիման վրա հնավայրի ու թանգարանի հանրահռչակման և մշակութային ծրագրերի խթանման նպատակով:

Համագործակցության առանցքում դրված են նաև հնավայրի ուսումնասիրության պատմությանը վերաբերող փաստավավերագրական նյութի ամբողջացումը և գիտակրթական նշանակության կարևորումը՝ մասնավորապես մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին պեղումների գործաշրջանին ներգրավելու միջոցով: